



## 110. ՍՈՏ ԸՍՈՂՆԵՐԵՆ ՆԱՂԱԾ

Մին թոնադ սոտ ասող մարթ ա ինոնմ, տա մին օր քյինամ ա Ըզդամը են բազարը, նի մննում տըեղետ ըստալավոյը, տըեսնում մին քանի հայ թիննը նես մին ըստոլ ըն զանիտ ըրալ, նստոտալ էտ մարթը թուշ քյինամ ա տահանց քըշտին նստում: Թիննը ներան մինն ասում ա.—Եկեքյ ամըեքյա մին սոտ ասըենքյ, հուր սոտ վըեր սազեվուշ, էս սուփըրեն խարչը քցինքյ ուրան վիզին: Լոխ ասում ըն՝ հա:

Տահանք մըրթը կլոխ ամեքյա մին սոտ ըն ասում, ծիծաղում: Տհանցա մինն ասում ա. «Մին օր մըեր շենումը հիշքան վըեր մարթ կար, հովքքեցե, տարե մըեր սարը, էտ սարումն ինձ մին կարտուշկատըեղ ա ինոնմ, ըտըեղ էտ տարեն մին մըեծ կարտուշկայա աման կյամ, վեց-օխտը քյանդիր ուրանը կցա լընք տամ, վըեր կարտուշկավը պատ ա կյամ: Կասըեմ արդեքյ, լոխ բիրաղի թշըեցեքյ, Վըեր հը լըրենքյ, տըեսնամ կարտուշկան վըեղան պուք եկը: Կարտուշկա, խե հինչ կարտուշկա, տասսը տարե Ըզդամը են բոլ-բոլ հերիքյ կանքեա:

Թաննան ուրան սոտը պըրծնում ա, հերթը հըսնում ա էտ մարթին: Տա ասում ա. «Ես սոտ ասըելը գյիղալ շըմ, ամմա մին քանի տարե առաջ վըեր թաքու ի, մոլոտաբոյ ըմ իլան, մին զզդան ընք շինալ, էտ զզդանեն մաշին օխտը ուստա լըն իլան պեն ընելիս, ուրանը սան ըսկընալիս լըն իլանլու:

Տա վըեր պըրծնում ա, թիննը ներան մինն ասում ա.—Սոտը շան տղա յա, թա էտ բոյին զզդան կինի՞: Տա յել թա՝ պա վըեր ինիվուշ, ծըեր պուք տուլած կարտուշկան հինչու մա՞լի պիտի իփիքյ: